ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

26.12.2023թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Կ.Ավետիսյանը- մարզպետի խորհրդական
Տ.Հովսեփյանը- մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Գրիգորյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ռ.Մարգարյանը, - Կ.Ադամյանը, Ա.Հակոբյանը, Ա.Բաղդասարյանը
Տ.Խաչատրյանը- մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին, մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Մ.Խեչումյանին, Ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին՝

Միջոցներ ձեռնարկել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ.

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին, Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

Վերահսկել համայնքների կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման մնացորդային գումարների վճարման գործընթացը և 2-օրյա ժամկետում ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Հետևողականություն դրսևորել և վերահսկել համայնքների ղեկավարներին տրված հանձնարարականների ժամանակին և սահմանված կարգով կատարման գործընթացի նկատմամբ:

26/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99